ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Համայնքային ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը շարադել ~~նոր~~հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքի հիմնական հասկացություններն օգտագործվում են «Հանրային ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել ~~նոր~~հետևյալ խմբագրությամբ.

«Համայնքային քաղաքական, համայնքային վարչական, համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք համայնքային ծառայողներ չեն համարվում:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածում «6-րդ» բառը փոխարինել «12-րդ» բառով:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «ա~~)~~» և «բ~~)~~» կետերում «քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում» բառերը փոխարինել «քաղաքական~~,~~ կամ վարչական~~,~~ կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում» բառերով:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել ~~նոր~~հետևյալ խմբագրությամբ.

«3. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հանրային պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու ժամանակաշրջանի աշխատանքային -ստաժը հավասարեցվում է համայնքային ծառայության ստաժին:»:

Հոդված 6. Օրենքի 22-րդ հոդվածում «20-րդ» բառը փոխարինել «18-րդ» բառով:

Հոդված 7. Օրենքի 23-րդ հոդվածում «21-րդ» բառը փոխարինել «19-րդ» բառով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: